Երբ պառաւի հետ ցած իջանք սանդուղքներից, բակում մեզ հանդիպեց վարպետ Փանոսի կինը: Նրա երեխաները (մինը տղայ, միւսը աղջիկ) մօր փէշիցը բռնած, տրտնջում էին եւ ինչ-որ ուզում էին: Ինձ տեսնելով, երկուսն էլ շնորհալի դէմք ընդունեցին: Որքա՞ն գեղեցիկ էին այդ մի զոյգ հրեշտակները, կայտառ, առողջ եւ մաքուր: Երեխայի մաքրութիւնից կարելի է գաղափար կազմել եւ մօր մաքրասիրութեան մասին: Վարպետի երրորդ որդին, բոլորից մեծը, գրքերը թեւի տակ առած, տանից դուրս էր գնում: Երեւի գնում էր մի տեղ սովորելու: Երբ նա հեռացաւ, երկու փոքրիկները նորից սկսեցին տրտնջալ:

Նրանց մայրը մօտեցաւ ինձ եւ գլխով լռութեամբ ողջունեց: Նա թէեւ չխօսեց իմ հետ, բայց իմ հասակին նայելով, երեսը չծածկեց: Ճակատը զարդարուած էր ոսկիներով, իսկ պարանոցը եւ կուրծքը՝ մարջանի խոշոր շարքերով: Այդ բոլորը մի առանձին փայլ էր տալիս նրա սիրուն, համակրական դէմքին: Ժիր տան տիկնոջ յատուկ սովորութեամբ՝ նա իր բաւական նուրբ գործուածներից պատրաստուած զգեստների վրայ հագել էր լայն, երկար, կարմիր շապիկ, որ իջնում էր մինչեւ ոտները: Այդ հագնում են գործի ժամանակ, որ միւս հագուստները չկեղտոտուին:

— Ինչո՞ւ չես խօսում, — հարսին իրաւունք տուեց պառաւ սկեսուրը, — դա էլ քո եղբայրն է:

Հարսի բերանը դարձեալ չբացուեցաւ, որովհետեւ քաղաքավարութիւնը պահանջում էր, որ ես սկսէի խօսակցութիւնը: Բայց ես, կին տեսած չլինելով, կանանց հետ խօսելու ամենեւին շնորհք չունէի: Որոնում էի մի բան՝ ասելու համար: Երեխաների տրտունջը ազատեց ինձ, նիւթ տուեց իմ խօսակցութեանը: Ես հարցրի.

— Ինչո՞ւ են տրտնջում դրանք:

— Ուզում են եղբօր հետ գնալ:

— Կարդալո՞ւ:

— Ինչ կարդացող պտուղներ են. կը գնան այնտեղ, կը խաղան, եղբօրն էլ կը խանգարեն, վարժապետին էլ:

— Ո՞վ է վարժապետը:

— Տէր Եղիշէն:

— Նա դպրոց ունի՞:

— Ունէր, բայց փակեցին... Այժմ այնպէս, իմ որդու եւ մի քանի բարեկամների մանուկների հետ օրեկան մի քանի ժամ պարապւում է: